«ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, սույն օրենքով նախատեսված կազմակերպություններում (այսուհետ՝ կազմակերպություններ) գործարարների ձեռնարկատիրական գործունեության հետ կապված շահերի ներկայացման և պաշտպանության, ձեռնարկատիրական հաշտարարի (այուհետ՝ Հաշտարար) լիազորությունների և նշանակման կարգի, ձեռնարկատիրական հաշտարարի գրասենյակի ստեղծման և գործունեության կարգի ու պայմանների, ինչպես նաև գործարարների շահերի պաշտպանության հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքի նպատակը

1. Սույն օրենքի նպատակը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում գործարարների շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված արդյունավետ մեխանիզմների ստեղծումն է, ինչպես նաև գործարար միջավայրի բարելավմանը նպաստելը և ներդրումների խթանման լրացուցիչ երաշխիքների ամրագրումը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **Գործարար՝** առևտրային կազմակերպություն, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ոչ առևտրային կազմակերպություն կամ անհա